ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Բանագիտական ակնարկներ, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 262 էջ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի երկարամյա հետազոտական և դասախոսական աշխատանքներն ամփոփող «Բանագիտական ակնարկներ» արժեքավոր աշխատությունը: Ի դեպ, հեղինակը երկար տարիներ Երևանի պետական համալսարանում դասավանդել է «Բանագիտություն» առարկան: Երկարատև գիտամանկավարժական հարուստ փորձի, բացառիկ կարողությունների իմաստավորմամբ է պայմանավորված, առհասարակ, գիտնականների կողմից՝ գիտության այս կամ այն բնագավառը ներկայացնող գիտատեսական ձեռնարկների ստեղծումը: Դրանք հեղինակից պահանջում են համառ ջանքեր, սկզբնաղբյուրների լայն իմացություն, նյութը մատուցելու հստակ եղանակներ ու յուրատիպ մոտեցումներ: Հեղինակի հիշյալ աշխատությունը՝ երեք տասնամյակ առաջ ձևավորված ստեղծագործական մտահղացումների արդյունք է: Ի սկզբանե հեղինակն առաջնորդվել է հստակ ծրագրով. ստեղծել գիտատեսական մի ձեռնարկ՝ նվիրված բանագիտական այն խնդիրների լուսաբանմանը, որոնք կնպաստեն ուսանողների ու ասպիրանտների՝ առարկայի տեսական յուրացմանը, բանահյուսության պատմության շրջափուլերի վերաբերյալ բազմահարուստ գիտելիքների իմացությանը: Հեղինակը, չբավարարվելով հայ բանագիտության անցյալի ձեռքբերումներով, երկար ու ձիգ տարիներ ղեկավարելով Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության տեսության և պատմության բաժինը, ուշի ուշով հետևել է բաժնում կատարվող աշխատանքներին, բանագիտության բնագավառում իրականացվող տեղաշարժերին, գիտահետազոտական և բանահավաքչական աշխատանքների ընթացքին: Նպատակը պարզ էր. չսահմանափակվել, սոսկ, հայ բանագիտության տեսության և պատմության անցած շրջափուլերի վերհանմամբ. այլ՝ հնի ու նորի փոխկապակցմամբ, մտառու քննարկմամբ բացահայտել ու լուսաբանել զարգացման այն մեծ ուղին, որով իր ինքնատիպ ճանապարհն է հարթել և դեռ շարունակում է հարթել հայ բանագիտությունն առ այսօր:

Հեղինակը համեստորեն աշխատանքը վերնագրել է «Ակնարկներ». իրականում այն բանագիտության տարբեր ոլորտները լուսաբանող մի ինքնատիպ աշխատություն է, որում առաջ քաշված խնդիրները նոր լույս են սփռում հայ բանագիտության անցած պատմական ուղու վրա, բազում սկզբնաղբյուրների վկայակոչմամբ բացահայտում հիշյալ բնագավառի կազմավորման, հետագա զարգացման իրական պատկերը՝ պայմանավորված հայ և այլ ժողովուրդների միջև առկա պատմական կապերի, մշակութային փոխառնչակցությունների հաջորդական ընթացքով: Աշխատության ներածականում հեղինակը ներկայացնում է բանահյուսության ձևավորման ուղիները հատկանշող շերտերը և գիտության այլնայլ բնագավառների հետ ունեցած պատմամշակութային աղերսների շեշտադրմամբ դիտարկում այն՝ իբրև պատմատիպաբանական օրինաչափություններով օժտված մի բարդ ու բազմանիստ մշակութային համակարգ, որի մասնագիտական ուսումնասիրությունը տարբեր մեթոդներով ու մոտեցումներով նա իրավացիորեն համարում է բանագիտության կարևորագույն խնդիրներից մեկը:

Աշխատության կառուցվածքը ներքին փոխկապակցմամբ բացահայտում է բա-

նագիտության տեսության ու պատմության հիմնական ոլորտները: Այն կազմված է տարբեր մասերից: Առաջին մասում ներկայացված են բանահյուսության ամենաբնորոշ հատկանիշներն ու բուն առանձնահատկությունները: Երկրորդ մասում՝ բանագիտության տեղն ու դերը այլ գիտությունների համակարգում, հեղինակն անդրադառնում է հատկապես ժողովրդագիտության սկզբնավորմանը, մասնավորապես Գրիմ եղբայրների առասպելաբանական դպրոցի, Թեոդոր Բենֆեյի պատմաարևելագիտական տեսության կամ «փոխառությունների դպրոցի», ֆիննական դպրոցի (պատմաաշխարհագրական մեթոդի), անգլիական մարդաբանական դպրոցի և հայ բանագիտության համակողմանի լուսաբանմանը (մինչ այդ դրանց վերաբերյալ եղել են սեղմ ու հակիրճ անդրադարձներ): Երրորդ մասում հեղինակն անդրադառնում է հայ բանահյուսության ժանրային համակարգի քննությանը (վիպական, քնարական, դրամատիկական): Հեղինակը վիպականում անդրադառնում է նախնադարյան հմայությանը, հմայական բանաձևերին, առասպելին և առասպելաբանությանը, մասնավորապես ժամանակային հայեցակետերին առասպելներում, հայ հին դիցարանին, ժողովրդական վեպերին, հեքիաթներին, ավանդություններին ու ավանդազրույցներին, առակին, անեկդոտին, վիպական երգերին («Նարեկացի», «Կարոս խաչ», «Ս. Մարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ»): Քնարական բանահյուսության առանձին տեսակներից քննության են առնված ծիսական, աշխատանքային, պանդխտության, ռազմի ու զինվորի, բանտարկյալի կամ կալանավորի, օրորոցային կամ մանկական, սիրո երգերը: Առանձին բաժին է կազմում ասույթաբանությունը (պարեմիոլոգիան), որում ընդգրկված են առած-ասացվածքները, հանելուկները:

Բանահյուսական հիշյալ ժանրերը մանրազնին քննության են ենթարկվել հեղինակի կողմից: Ընթերցողը գրքի յուրաքանչյուր գլխում կհանդիպի թարմ ու ինքնատիպ բացահայտումների, որոնք և կնպաստեն մշակութային արժեքների վերաբերյալ նրա խորքային իմացությանը:

Ս. Հարությունյանի «Բանագիտական ակնարկներ» աշխատությունը ոչ միայն կարևոր ներդրում է հայ բանագիտության մեջ, այլև այն գիտություն-կրթություն կապն ամրապնդող մի ինքնատիպ ձեռնարկ է, որը, անշուշտ, բազում սերունդների հետազոտական աշխատանքներին նոր վերելք ու լիցք կհաղորդի:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ